LIFE LONG LEARNING PROCESS TO REFORM THE THEORIES AND PRACTICES OF EDUCATION SECTOR IN THE COUNTRY

This work was supported by the research project №21T-5C155

Poghosyan G.S., Gasparyan A.M., Amiryan E.V. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Yerevan, Armenia)
gayane_surenovna@yahoo.com, anahit-movsesi@mail.ru, amiryan.1996@inbox.ru

Ներկայացման ամս. 23.07.2021
Գրախոսման ամս. 14.08.2021
Տպագրության ընդունման ամս. 29.11.2021

This article analyzes the theoretical foundations of lifelong learning as opportunities for a person to live and flourish in a democratic society. Continuous learning, according to the existing concept, implies that a person needs to constantly keep learning, update the acquired knowledge, skills and abilities. It should be implemented throughout life not only by means of natural communication, life experience, but also through the realization of variety conscious educational opportunities via formal, non-form and informal education. In the article, determinations, standards and objectives of the lifelong learning listed in local and international literature are stated. Detailed analysis of the authors' work, models and reports, as well as the approaches of different specialists of our country are set out.Video-methodological analysis shows that almost all European countries, including China, are shifting from adult to continuing education, and then to lifelong learning.

Keywords: *lifelong education, lifelong learning, continuing education, formal, non-form and informal education.*

DOI: https://doi.org/10.46991/SBMP/2022.5.1.099

Ցկյանս ուսումնառությունը (ՑՈՒ) լայնորեն սահմանվում է որպես ողջ կյանքի ընթացքում տեղի ունեցող ուսուցում/կրթություն, որը ճկուն է, բազմազան և հասանելի է մարդկանց կյանքի տարբեր փուլերում և վայրերում: Ցկյանս ուսումնառությունը գտնվում է կրթական, հասարակական և աշխատանքային ոլորտների հատման կետում և նպաստում է ուսման հնարավորությունների բազմազանությանը՝ չսահմանափակվելով ավանդական կրթական համակարգով կամ պարտադիր կրթությամբ: Այս սահմանումը հիմնվում է Դելորսի զեկույցի «սովորելու չորս սյուների» վրա [6].

Սովորում եմ իմանալ.

Ենթադրում է ոչ թե համակարգված գիտելիքների ձեռք բերում, այլ գիտելիքի աստիճանական յուրացում՝ հարմարեցված անհատական հատկանիշներին,

Սովորում եմ անել.

Ապահովում է ներկայում և ապագայում պահանջվող աշխատանքային հմտությունները՝ ներառյալ նորարարություն ն ուսումնառության համապատասխանեցումը ապագա աշխատանքային,

Սովորում եմ գոյակցել ուրիշների հետ.

Կենտրոնանում է հակամարտության խաղաղ կարգավորման, այլ մշակույթների հետ գոյակցման, համայնքների կարողությունների և անհատական հմտությունների զարգացման, տնտեսական ճկունության և սոցիալական ներառման խնդիրների վրա,

Սովորում եմ լինել/դառնալ.

Նպաստում է մարդու մտավոր ու ֆիզիկական կարողությունների, զգայունության, ներդաշնակության և գեղագիտական գնահատման ամբողջական զարգացմանը:

Այս չորս սյուները կազմավորում են «**սովորում եմ սովորել**» հենասյունը:

Ցկյանս ուսումնառությունը մարդկանց մեջ կարող է սերմանել ստեղծագործական մոտեցում, նախաձեռնություն և պատասխանատվություն հակամարտությունների շուրջ բանակցելու համար:

Եվրոպական հանձնաժողովը գտնում է, որ ցկյանս ուսումնառությունն ունի «չորս ընդհանուր և փոխաջակցող նպատակներ՝ կյանքի հանդեպ բավարարվածություն, ակտիվ քաղաքացիություն, սոցիալական ներգրավվածություն և աշխատունակություն»: Այս առումով, ցկյանս ուսումնառությունն ունի համընդգրկուն չափանիշներ, որոնք գերազանցում են տնտեսական և մասնագիտական նեղ ոլորտները:

Եվրոպական նախաձեռնությունը ցկյանս ուսումնառությունը սահմանում է որպես «… աջակցող շարունակական գործընթաց, որը խրախուսում է անհատներին ձեռք բերել բոլոր այն գիտելիքները, հմտություններն ու արժեքները, որոնց պահանջը կունենան ողջ կյանքի ընթացքում և ցանկացած միջավայրում կիրառել դրանք վստահությամբ, ստեղծագործականությամբ և հաճույքով» [9]:

«Ցկյանս ուսումնառություն» հասկացությունը հատկապես եվրոպական երկրներում դառնում է էլ ավելի հայտնի: Ըստ վերոհիշյալ սահմանման. «Ցկյանս ուսումնառությունը գիտելիքների և հմտությունների ստացման ու զարգացման անընդհատ գործընթաց է, որը տևում է ողջ կյանքի ընթացքում: Այստեղ սովորողը հստակ գիտի՝ ինչու՞ է սովորում և ինչպե՞ս սովորի»:

Ինչու՞ է սովորում: Սովորում է, որպեսզի մասնագիտանա, խորացնի գիտելիքները, ընդլայնի աշխարհայացքը, մարդկանց հետ շփումների ժամա-

նակ դառնա ինքնավստահ և բնավորության մեջ զարգացնի իրեն ցանկալի հատկանիշներ:

Ինչպե՞ս սովորի: Մոտիվացնի իրեն նոր գիտելիքներ ստանալու համար, ցանկացած խնդրի վերաբերվի այնպես, որ այն անպայման պետք է լուծվի, կիրառի տեղեկատվական տեխնոլոգիաները, գիտելիքների ստացման հնարավոր աղբյուրները, սովորեցնի ուրիշներին, կիսվի փորձով, նոր գիտելիքներ ստանալու գործընթացը դարձնի իր կյանքի մի մասը և պարզապես հաճույք ստանա դրանից:

Ցկյանս ուսումնառությունը դիտվում է որպես կրթության ամբողջական պատկեր և ճանաչում է ուսումնառությունը տարբեր միջավայրերում: Այն արտահայտվում է երկու մակարդակներում՝ անհատական և հասարակական:

1. **Անհատական մակարդակում** ցկյանս ուսումնառությունը այն գաղափարային հենքն է, որի շնորհիվ անձը կարող է ուսումնառել կյանքի ցանկացած փուլում՝ զարգացնելով որոշակի հմտություններ:
2. **Հասարակական մակարդակում** ցկյանս ուսումնառությունը կրթության ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ձևերը ճանաչող համընդգրկուն կրթական համակարգ է:

ՑՈՒ-ն կարող է իրականացվել ֆորմալ՝ այսինքն ակադեմիական, ոչ ֆորմալ և ինֆորմալ եղանակներով, սակայն ՑՈՒ-ն կարևորվում է ոչ ֆորմալ ձևաչափով կրթություն ստանալու հնարավորությունը, որը հիմնված է թիրախ խմբի քաղաքացիական բազային արժեքների և մտածողության փոփոխության հիման վրա:

Կան տեսություններ, որոնք ապացուցում են, որ մարդու ուսումնառությունը, մտավոր գործունեությունը պայմանավորված է ոչ միայն գիտելիքի փոխանցմամբ կամ ընկալմամբ, այլ նաև մեծ առնչություն ունի շրջակա միջավայրի հետ, դիրքավորված է այն մշակույթում, այն համայնքում, այն տնտեսության մեջ, որտեղ մենք ենք ապրում, հետևաբար շփումների, հաղորդակցության դերը շատ կարևոր է, հատկապես, երկարատև ուսումնառության դեպքում: Ներկայումս ինկոգնիտիվ հոգեբանությունը պնդում է, որ մարդը կարող է սովորել, ընկալել և յուրացնել միայն այն դեպքում, երբ նա գտնվում է այնպիսի միջավայրում, որտեղ կա այդ գիտելիքը և կա այդ գիտելիքը ստանալու հնարավորությունը:

Փակ դասարանային միջավայրերը կորցնում են իրենց առօրեականությունը և անհրաժեշտություն է դառնում փնտրել այդ հմտություններն ու կարողությունները զարգացնելու միջոցներ փակ տարածքներից դուրս, ինչն էլ հանգեցնում է այն գաղափարին, որ ցկյանս ուսումնառությունը ծառայում է որպես գործիքակազմ մարդու համար՝ հասկանալու, թե ինչպես նա կարող է լավագույնս ընկալել, ձեռքբերել, յուրացնել անհրաժեշտ գիտելիքները [10]:

Ողջ կյանքի ընթացքում կրթության գաղափարն ամբողջականացրել է առաջատար տեսաբան Փոլ Լենգրանդը (Դանիա), ով 1965 թ. մշակել է

«Ցկյանս ուսումնառության» հայեցակարգը, իսկ տեսությունը ներկայացրել է ՅՈՒՆԵՍԿՕ-ին [5]: Նրա մեկնաբանությունը հիմնված է անհատին բոլոր ուսումնառական գործընթացների կենտրոնում դիտարկելու գաղափարին: Հաջորդ տարիների ընթացքում տեսությունը փոփոխության է ենթարկվել կախված գիտատեխնիկական նորարարություններից և սոցիալական պահանջներից:

1980-ականներին ՅՈՒ-ն (Չինաստան) որպես ազատ, արդար և ժողովրդավարական հասարակության զարգացման միջոց կոչ է արել՝ հնարավորություն տալ նաև հասարակության ոչ արտոնյալ անդամներին օգտվելու կրթության լայն հնարավորություններից բարելավելու համար իրենց կյանքի որակը [7]:

«Ցկյանս ուսումնառություն» հասկացության զարգացումն ու գործնական կիրառությունը լրջորեն փոխել է կրթության, այդ թվում նաև մասնագիտական կրթության տեսությունն ու պրակտիկան: Այսպիսի մոտեցման արդյունքում գրեթե բոլոր եվրոպական երկրներն անցան մեծահասակների կրթությունից դեպի շարունակական կրթություն, այնուհետև, ՅՈՒ՝ ողջ կյանքի ընթացքում ուսուցման ճանապարհը, բոլոր մակարդակներում կրթության զարգացման և բարեփոխումների քաղաքականության մշակման գործընթացում հաշվի առնելով պատմական և սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունները: Այս առումով հատկանշական է Ֆինլանդիան, որը համարվում է զարգացած երկրների մեջ ցկյանս ուսումնառության իրականացման լավագույն օրինակ, որտեղ ողջ բնակչությունն ակտիվ կերպով ներգրավված է ցկյանս ոսումնառության գործընթացի մեջ, և պետությունն ամեն կերպ աջակցում է [4]:

ՅՈՒ-ի գաղափարն իր արտացոլումն է գտել տարբեր միջազգային կազմակերպությունների փաստաթղթերում: Կրթական համակարգերի պլանավորման և կառավարման ոլորտում ունեցած փորձի փոխանակման շնորհիվ ՅՈՒՆԵՍԿՕ-ն «Կայուն զարգացման օրակարգ 2030 փաստաթղթ»-ի միջոցով օգնում է երկրներին, որպեսզի սովորողներն հնարավորություն ունենան ողջ կյանքի ընթացքում համընդհանուր որակյալ կրթություն ստանալ:

Մեր տարածաշրջանում աշխարհաքաղաքական և սոցիալ-տնտեսական պայմանների սրվելու հետևանքով կարևորվում են մարդկային ռեսուրսների օգնությամբ հաղթահարելու ստեղծված իրավիճակը, շեշտադրելով անհատի անվտանգությունը և ապահովելով հետագա զարգացումները: Առաջանում է նոր մասնագիտացումների պահանջ, որոնք անհատին բոլոր տարիքներում էլ հնարավորություն կնձեռնեն ինքնուրույն որոշումներ կայացնել արժևորելու փոփոխելի մասնագիտությունը կախված աշխարհաքաղաքական իրավիճակից և սոցիալ-տնտեսական պահանջներից: «Ողջ կյանքի ընթացում» ուսումնառելը պետք է ընկալվի ոչ միայն որպես անհատի՝ կրթության մի մակարդակից կամ տեսակից մյուսին անցնելու և համապատասխան հմտություններ

ձեռք բերելու գործընթաց, այլ նաև որպես տարաբնույթ փոխկապակցված կրթական հնարավորությունների բարդ համակարգ՝ արհեստավարժ դասավանդողների ընդգրկմամբ [8]:

Այդ տեսակետից բավականին հետաքրքիր է վերոհիշյալ խնդրի դրվածքը տարբեր երկրներում [3]: Այնպիսի երկրներ, ինչպիսիք են՝ Բուլղարիան, Իսպանիան, Լիտվան, Պորտուգալիան, Ռումինիան, Սլովենիան և Սլովակիան, մասնագիտական զարգացումը վերապատրաստման միջոցով, կամ արհեստավարժությունը պայման է, և այն նպաստում է կարիերայի և աշխատավարձի աճին: Ֆրանսիայում և Լեհաստանում, մասնագիտական զարգացումը հստակ կապված է կարիերայի զարգացման հետ [2]:

Ինչպես ցույց են տալիս գրականության վերլուծության արդյունքները, ցկյանս ուսումնառության հնարավորությունը կարող է փոխել մարդու կյանքը: Եթե մոտ 20 տարի առաջ հայկական իրականությունում տարօրինակ կարող էր ընկալվել երեսունն անց անձի բարձրագույն կրթություն ստանալու կամ մասնագիտությունը փոխելու մասին միտքը, ապա այսօր այն արդիական է:

«Ներկայումս հարահոս է կյանքը, և այնպիսի արագությամբ են փոփոխվում տեխնոլոգիաները, որ արդեն 2-3 տարի առաջվա շրջանավարտը նոր պայմաններին չի կարող բավարարել և այդ իմաստով նա անընդհատ կարիք ունի վերապատրաստման: Այսինքն՝ նոր կարողություններ պետք է ձեռք բերի, որոնք ավելի ճկուն կդարձնեն նրան» [1]:

Ոչ ֆորմալ կրթության մասին տեղեկացվածության մակարդակը Հայաստանում բավական ցածր է: Ինչպես նշված է «ՀՀ Ցկյանս ուսումնառության հայեցակարգ»-ում, Հայաստանում այս գործընթացը մուտք է գործել 1990-ականների սկզբից, սակայն ցկյանս ուսումնառությունն այժմ էլ դեռևս ճանաչման լայն կարիք ունի, քանի որ քչերը գիտեն այն հնարավորությունների մասին, որն ընձեռում է ՑՈՒ-ն:

Եզրակացություն: Այսպիսով, կրթության զարգացման և բարեփոխումների քաղաքականության մշակման գործընթացում հաշվի է առնվում տվյալ երկրի պատմական և սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունները:

«Ցկյանս կրթության» գործընթացը կարող է փոխել տվյալ երկրի կրթության ոլորտի, այդ թվում նաև մասնագիտական կրթության տեսությունն ու պրակտիկան:

Ցկյանս ուսումնառությունը կարևոր է Հայաստանի համար, քանի որ մեր երկիրն ունի սոցիալական, տնտեսական, քաղաքացիական և էկոլոգիական ոլորտներում զարգացման կարիք: Անհրաժեշտ է մշակել և գործի դնել ցկյանս ուսումնառության ծրագրեր: Մեր հասարակությանը անհրաժեշտ են այնպիսի ուսումնական, որոնք միտված կլինեն անհատի մեջ զարգացնելու մտավորն ու հոգևորը: Մեր բուհերն ու դպրոցները բարեփոխման կարիք

ունեն: Սովորողը պետք է կարողանա պատասխանել հետևյալ հարցերին՝ «ինչու՞ սովորել», «ի՞նչ սովորել», «ինչպե՞ս սովորել»: Այսպիսով, մասնագիտական պատրաստվածությունը ողջ կյանքի ընթացքում գործընթացը իրականացնելու համար անհրաժեշտ և պարտադիր պայման է, և այն հնարավորություն է ընձեռնում արհեստավարժ լինել:

Գրականություն

1. **Պիպոյան Ս.** Մեծահասակների կրթությունը և ուսումնառությունը Հայաստանում: Ուսումնական նյութերի ժողովածու, ԵՊՀ, Երևան, 2018, էջ 95-110:
2. **Куля Э., Пэнковска М.** Профессиональное развитие учителей в странах европейского союзакак элемент непрерывного образования, 2016, с. 54-62.
3. **Погосян Г.С., Гаспарян А.М., Григорян М.М.** Анализ процесса обучения на протяжении всей жизни. Молодежь и будущее: профессиональная и личностная самореализация. Материалы X междун. научно-практической конференции. г. Владимир, 2021, с. 57-62.
4. **Finnish National Board of Education** (2014; 2015): The National Core Curriculum for Basic Education. http://www.oph.fi/English.
5. **Lengrand Paul.** An Introduction to Lifelong Education, UNESCO, Paris, 1971, p. 99. http://www.tandfonline.com/doi/abs/10.1080/00220612.1972.10671918
6. **Learning: the treasure within; report to UNESCO of the International Commission on Education for the Twenty-first Century (highlights),** The Delors Report, 1996.
7. **Zhang, W.Y. (2014).** Constructing China's lifelong learning "Lijiaoqiao": An international perspective. Distance Education in China, 34(6), 28-32. DOI: 10.13541/j.cnki.chinade.2014.06.004
8. The future is ours to learn, https://labour.org.uk/wp-content/uploads/2019/11/Lifelong-Learning-Report-2019.pdf.
9. Life long learning concept https://www.ikanos.eus/wpcontent/uploads/2019/08/LifeLongLearning.Concept.Paper_.pdf?fbclid=IwAR1NKoG5tj2yGx4Lun0kIwyHIPu6RSXv8W-VmPCXwNuCvadrBV0NpkR0sTMաp
10. **Սողոմոնյան Է.** Մեծահասակների կրթություն և ցկյանս ուսումնառություն. http://boon.am/andragogia-4/

ՑԿՅԱՆՍ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՄԻՋՈՑ

Հետազոտությունն իրականացվել է №21T-5C155 նախագծի աջակցությամբ:
Պողոսյան Գ.Ս., Գասպարյան Ա.Մ., Ամիրյան Ե.Վ. (ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն, Երևան, Հայաստան)

Սույն հոդվածում վերլուծվում են ցկյանս ուսումնառության տեսական հիմքերը՝ որպես ժողովրդավարական հասարակությունում ապրելու և անընդմեջ զարգանալու անձի հնարավորություններ: Ցկյանս կրթությունը, ըստ գոյություն ունեցող հայեցակարգի, ենթադրում է, որ անձին անհրաժեշտ է շարունակաբար սովորել, ձեռք բերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները թարմացնել՝ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթություն ստանալով: Հոդվածում տրված են տեղական և արտասահմանյան գրականության մեջ ներառված ցկյանս ուսումնառության սահմանումները, չափանիշները, Եվրոպական հանձնաժողովի կողմից սահմանված նպատակները: Մանրամասն վերլուծված են ինչպես արտերկրի հեղինակների փորձը, մոդելները և զեկույցները, այնպես էլ մեր հանրապետության տարբեր մասնագետների մոտեցումները: Կրթության զարգացման և բարեփոխումների քաղաքականության մշակման գործընթացում հաշվի է առնվել տվյալ երկրի պատմական և սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունները: «Ցկյանս կրթության» գործընթացը կարող է փոխել տվյալ երկրի կրթության ոլորտի, այդ թվում նաև մասնագիտական կրթության տեսությունն ու պրակտիկան:

Կատարված տեսամեթոդոլոգիական վերլուծությունը թույլ է տվել ենթադրել, որ գրեթե բոլոր եվրոպական երկրները, նաև Չինաստանն, անցել են մեծահասակների կրթությունից դեպի շարունակական կրթության, այնուհետև՝ ողջ կյանքի ընթացքում ուսումնառության ճանապարհը:

Հանգուցային բառեր՝ *ցկյանս կրթություն, ցկյանս ուսումնառություն, շարունակական կրթություն, ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթություն:*

ПРОЦЕСС НЕПРЕРЫВНОГО ОБРАЗОВАНИЯ КАК СРЕДСТВО РЕФОРМИРОВАНИЯ ТЕОРИИ И ПРАКТИКИ СЕКТОРА ОБРАЗОВАНИЯ СТРАНЫ

Погосян Г. С., Гаспарян А. М., Амирян Е. В. (Национальная академия наук Республики Армения, Ереван, Армения)

В данной статье анализируются теоретические основы непрерывного обучения как возможности для человека жить и процветать в демократичес-

ком обществе. Непрерывное обучение, согласно существующей концепции, подразумевает, что человеку необходимо постоянно учиться, обновлять приобретенные знания, навыки и способности. На протяжении всей жизни оно должно осуществляться не только через естественное общение, жизненный опыт, но также через реализацию множества сознательных образовательных возможностей, получая формальное, неформальное, информальное образование.

В статье изложены определения, стандарты и цели обучения на протяжении всей жизни, включенные в местную и зарубежную литературу. Подробно проанализирован опыт зарубежных авторов, модели и отчеты, а также подходы различных специалистов нашей страны. Видео-методологический анализ показывает, что почти все европейские страны, а, также и Китай, перешли от образования взрослых к непрерывному образованию, а затем к обучению на протяжении всей жизни.

Ключевые слова: *Образования на протяжении всей жизни, обучения на протяжении всей жизни, непрерывное образование, формальное, неформальное, информальное образование.*